



Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն Երևանյան գրասենյակ



«ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ ԱԿՈՒՄԲ» ՀԿ

Ծրագիրը համաֆինանսավորվել է Եվրոպական միության կողմից

Ծրագիրը համաֆինանսավորվել է ԵԱՀԿ Երևանյան գրասենյակի կողմից

Իրականացնող՝ Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա

Գործընկեր՝ Ինֆորմացիայի ազատության կենտրոն

Իրականացնող՝ «Լրագրողների «Սելեն» ակումբ» ՀԿ

«ԼՐԱԳՐՈՂՆԵՐԻ «ՍԵԼԵՆ» ԱԿՈՒՄԲ» ՀԿ

«ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԲԱՑԱՌՈՒՄՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ, ԵՎ ԴՐԱՆ ՆՊԱՍՏՈՂ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՔԱՅԼԵՐԸ» ԾՐԱԳՐԻ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԼՈՒՈՒ ՄԱՐԶ

«Կոռուպցիայի բացառումն առողջապահության ոլորտում, և դրան նպաստող անհրաժեշտ քայլերը» ծրագիրը իրականացրել է «Լրագրողների «Սելեն» ակումբ» հասարակական կազմակերպությունը՝ «Լոռու ՄԻԳ» հեռուստաընկերության հետ համագործակցությամբ՝ «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: Ծրագրի բյուջեն կազմել է 1,640,200 ՀՀ դրամ, որից 949,200 ՀՀ դրամը տրամադրվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից: Ծրագրի տևողությունն է՝ 2015թ. հուլիսի 1-ից մինչև 2015թ. հոկտեմբերի 31-ը:

«Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

ք.Վանաձոր

2015թ.

«Կոռուպցիայի բացառումն առողջապահության ոլորտում, և դրան նպաստող անհրաժեշտ քայլերը» ծրագրի հաշվետվություն

«Լրագրողների «Սելեն» ակումբ» հասարակական կազմակերպությունը՝ «Լոռու ՄԻԳ» հեռուստաընկերության հետ համագործակցությամբ 2015թ. հուլիսի 1-ից հոկտեմբերի 31-ը իրականացրել է «Կոռուպցիայի բացառումն առողջապահության ոլորտում, և դրան նպաստող անհրաժեշտ քայլերը» (այսուհետ՝ Ծրագիր): Ծրագիրն իրականացվել է «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցիացիա» հասարակական կազմակերպության և «Ինֆորմացիայի ազատության կենտրոն» հասարակական կազմակերպության համագործակցությամբ գործարկվող «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագրով տրամադրված փոքր ենթադրամաշնորհների շրջանակներում: «Կոռուպցիայի դեմ պայքարի բազմակողմանի խթանում» ծրագիրը համաֆինանսավորվում է Եվրոպական միության և ԵԱՀԿ-ի կողմից:

Ծրագրի նպատակն էր բացառել կոռուպցիոն ռիսկերը Վանաձորի հիվանդանոցային համալիրում՝ հիմնականում ծննդոգնության և մանկական բաժանմունքներում: Նպատակին հասնելու ուղղությամբ Ծրագրի շրջանակներում նախատեսվել և իրականացվել են հետևյալ քայլերը.

1. 01.07.2015- 01.08. 2015թթ. ժամանակահատվածում հարցումներ լրագրողների միջոցով՝ Վանաձորի հիվանդանոցային համալիրում՝ POP-FOX ձևաչափով, թվով 4 հարցումներ՝ մոտ 80 հիվանդի և 30 բուժաշխատողների հետ: Արդյունքում պատրաստվեց հեռուստառեպորտաժը, վեր հանվեցին խնդիրները, առաջարկությունները, պարզ դարձավ առկա իրավիճակը, որոնց լուծումը հետագայում ընդգրկվեց առաջարկությունների փաթեթի մեջ:

2. 01.07.2015- 22.08.2015 թթ. ժամանակահատվածում սոցիոլոգիական հարցումներ հարցաթերթիկների միջոցով, մոտ 300 հարցաթերթ՝ բժիշկների, միջին և կրտսեր բուժանձնակազմի, ծննդոգնության բաժանմունքի հիվանդների, մանկական բաժանմունքի հիվանդ երեխաների ծնողների հետ: Կից ներկայացվում է վերլուծությունների արդյունքները:

3. 02.08.2015թ.-ին «Լոռու ՄԻԳ» հեռուստառադիոընկերությամբ ուղիղ եթերի հեռարձակում Վանաձորի առողջապահության ոլորտում տիրող իրավիճակի մասին: Ուղիղ եթերի հյուրերն էին Լոռու մարզի առողջապահության ոլորտի տեսչության պետ Լուսինե Վարդանյանը, Ծրագրի ղեկավար Նարինե Խաչատրյանը և իրավաբան Արտուր Հարությունյանը: Ըստ տվյալների՝ ուղիղ եթերը դիտվել է Վանաձոր քաղաքի բնակիչների 15-20%-ի կողմից:

4.«Չայն բազմաց» հեռուստառեպորտաժի պատրաստում և ցուցադրում: «Լոռու ՄԻԳ» հեռուստառադիոընկերության լրագրողների կողմից հարցումներ են անցկացվել Վանաձոր քաղաքի տարբեր թաղամասերի սոցիալական խմբերի ներկայացուցիչների հետ՝ առողջապահության ոլորտի կոռուպցիոն ռիսկերի հետ կապված: Ըստ տվյալների՝ հեռուստառեպորտաժը դիտել են Վանաձոր քաղաքի բնակիչների 15-20%-ը: Հեռուստառեպորտաժը տեղադրվել և տարածվել է նաև առցանց՝ սոցիալական մեդիայի միջոցով:

Առցանց հղումը՝ <https://www.youtube.com/watch?v=87FwPIP5rKo&feature=youtu.be>

5. Իրազեկման սեմինարների կազմակերպում. Ծրագրի շրջանակում կազմակերպվել են իրազեկման 4 սեմինար, որն մասնակցել են ավելի քան 80- մասնակից, ովքեր իրազեկվել են իրենց իրավունքների և առողջապահության ոլորտում պետության կողմից ընձեռնված արտոնությունների վերաբերյալ: Սեմինարները վարել են Վանաձորի հիվանդանոցային համալիրի բժիշկ Դավիթ Շահվերդյանը և Ծրագրի իրավաբան Արտուր Հարությունյանը:

Սեմինարները ցուցադրվել և լուսաբանվել են «Լոռու ՄԻԳ» հեռուստառադիոընկերության եթերում, այնուհետև տեղադրվել և տարածվել են նաև առցանց՝ սոցիալական մեդիայի միջոցով: Առցանց հղումը՝

<https://www.youtube.com/watch?v=K3DQ1j6lqmk>

<https://www.youtube.com/watch?v=8Guk->

<FO57FU&feature=youtu.behttps://www.youtube.com/watch?v=5cgW2tHSdS8>

6. 30.10.2015թ.-ին «Կոռուպցիայի բացառումն առողջապահության ոլորտում, և դրան նպաստող անհրաժեշտ քայլերը» ծրագրի հետազոտությունների շնորհանդես: Միջոցառմանը մասնակցեցին Լոռու մարզպետ Ա. Նալբանդյանը, «Հայաստանի երիտասարդ իրավաբանների ասոցացիա» ՀԿ-ի նախագահ Կարեն Զադոյանը, Վանաձորի հիվանդանոցային համալիրի տնօրեն Վարդան Աբովյանը, Լոռու մարզի առողջապահության վարչության պետ Սամվել Լամբարյանը, Պետական առողջապահական գործակալության պետ Ա. Ամիրյանը, Լոռու մարզի առողջապահության տեսչության պետ Լուսինե Վարդանյանը, բժիշկներ Դավիթ Շահվերդյանը և Աշոտ Պապյանը, իրավաբաններ, Ծրագրի փորձագետները: Միջոցառման ընթացքում Ծրագրի ղեկավար Ն. Խաչատրյանը ներկայացրեց Վանաձորի հիվանդանոցային համալիրում տիրող իրավիճակը, հարցաթերթիկների վերլուծության արդյունքները և դրանց հիման վրա կազմված առաջարկությունները: Միջոցառումը լուսաբանվեց Իրավաբան.net անկախ մասնագիտական կայքի և մարզային ԶԼՄ-ների կողմից, մասնավորապես՝ «Լոռի», «Ֆորտունա», «Լոռու ՄԻԳ»

հեռուստաընկերությունների կողմից: Ըստ տվյալների՝ մարզային հեռուստաընկերությունների կողմից միջոցառման լուսաբանումները դիտել են Վանաձոր քաղաքի բնակչության մոտ 50%-ը: Դրանք տեղադրվել և տարածվել են նաև առցանց՝ սոցիալական մեդիայի միջոցով:

Առցանց հղումները՝

<https://www.youtube.com/watch?v=-aztyh0ceCw&feature=youtu.be>

<http://iravaban.net/104933.html#ad-image-0>

<http://iravaban.net/en/104994.html#ad-image-0>

Պետք է նշենք նաև, որ այժմ Վանաձորի հիվանդանոցային համալիրն ունի գործող կայք, որը բարձիթողի վիճակում էր և չէր գործում: Ծրագրի իրականացման ընթացքում կայքը գործարկվեց վերստին՝ www.vanmc.am:

Մանկական բաժանմունքի հիվանդ երեխաների ծնողների կողմից կոռուպցիոն ռիսկերի գնահատման արդյունքները ներկայացվում է Հավելված 1-ում:

«Լրագրողների «Սելեն» ակումբ» ՀԿ-ի նախագահ՝

Ն. Խաչատրյան

«Լոռու ՄԻԳ» ՍՊԸ-ի տնօրեն՝

Ս. Հարությունյան

31.10.2015